

# MEDGEN

Բժշկական գենետիկայի կրթության զարգացումը կրթական ծրագրային բարեփոխումների և հետբուհական վերապատրաստողական ծրագրերի հաստատման միջոցով

*Ռուս-Հայկական (Մշակոնական) համալսարանի Ուսուցման Արդյունքները Գենետիկական Խորհրդատվության Մագիստրոսական Ծրագրի Համար*

Ստորև ներկայացված են չորս լայնածավալ Ուսուցման Արդյունքները (ՈւԱ) գենետիկայի ոլորտում, որում առաջարկվում են այն հմտությունները, որոնք շրջանավարտ գենետիկական խորհրդատուն պետք է տիրապետի ծրագրի ավարտից հետո՝

1. Հաղորդակցական հմտություններ
2. Մասնագիտական հմտություններ
3. Խորհրդատվական հմտություններ
4. Մասնագիտական բարոյական արժեքներ և հմտություններ

1. Հաղորդակցական հմտություններ

**Ծրագիրը ավարտելուց հետո շրջանավարտը պետք է կարողանա**

- ստեղծել փոխադարձաբար համաձայնեցված գենետիկական խորհրդատվության օրակարգ հաճախորդի հետ

- սահմանել հաճախորդի հետ հարաբերություններ՝ հիմնված կարեկցանքի վրա և բացահայտել նրա մտահոգություններն ու կարիքները
- ձեռք բերել և արձանագրել համապատասխան և ամբողջական ընտանիքի պատմությունը
- աջակցել հաճախորդին, որպեսզի նա կատարի տեղեկացված որոշումներ այն հավանական գործողությունների վերաբերյալ որոնք առնչվում են իրենց ընտանեկան պատմությանը
- ձեռք բերել համապատասխան բժշկական տեղեկատվություն՝ այդ թվում հղիության, զարգացման, բժշկական և հոգեբանական պատմությունների վերաբերյալ
- տարբեր կրթական, սոցիալ-տնտեսական եւ էթնո-մշակութային ծագում ունեցող հաճախորդներին բացատրել ախտորոշիչ և սկրինինգային մեթոդների տեխնիկական և բժշկական ասպեկտները, ինչպես նաև գենետիկական հիվանդությունների բուժումն ու կառավարումը և/կամ բնածին արատների նկարագիրը
- վարել գենետիկական խորհրդատվության դեպքը մշակութային առանձնահատկություններին համապատասխանող ձևով
- փաստել և ներկայացնել գենետիկական խորհրդատվության դեպքին վերաբերվող տեղեկությունները հստակ և հակիրճ՝ բանավոր և գրավոր ձևով:

## 2. Մասնագիտական հմտություններ

### Ծրագրի ավարտից հետո շրջանավարտը պետք է

- խորացված պատկերացում և գիտելիքներ ունենա գենետիկայի և գենոմիկայի հիմնական հասկացությունների և սկզբունքների մասին
- պատկերացում ունենա գենետիկական խորհրդատվության տեսության մասին՝ գենետիկական առողջության պահպանման տեսանկյունից
- կարողանա բացահայտել և ինտեգրել ժամանակակից գենետիկական հետազոտությունների տարբերակները, որոնք օգտագործվում են գենետիկական խորհրդատվության ընթացքում:
- կարողանա հասկանալ և բացատրել ժառանգականության տիպերը և տարբեր գենետիկական հիվանդությունների հիմքում ընկած մեխանիզմները:
- կարողանա հասկանալ և տրամադրել կլինիկական, ինչպես նաև բուժման եղանակների տեղեկատվություններ հաճախորդներին և նրանց ընտանիքի անդամներին:
- ունենա գիտելիքներ վերարտադրողական համակարգի օրգանների և մարդու ընդհանուր կառուցվածքաբանության մասին
- կատարի գենետիկական ռիսկերի համապատասխան և ճշգրիտ գնահատում
- կարողանա կառուցել համապատասխան և համապարփակ ընտանեկան տոհմաճառ

- կարողանա գնահատել հաճախորդի պատկերացումները, առաջնորդել խորհրդատվություն ընթացքը անհրաժեշտության դեպքում, ինչպես նաև, ճկուն կերպով պատասխանատու լինել տրամադրած տեղեկատվության համար
- կարողանա քննադատորեն գնահատել և վերլուծել գենետիկական, բժշկական գրականությունը և գրառումները:

### **3: Խորհրդատվական հմտությունները**

#### **Ծրագրի ավարտից հետո շրջանավարտը պետք է կարողանա**

- օգտագործել մի շարք խորհրդատվական հմտություններ
- պատշաճ կերպով օգտագործել խորհրդատվական տեխնիկաները, որոնք կապված են գենետիկական առողջության հետ
- ապահովել հաճախորդին ուղղված խորհրդատվություն և մտավոր աջակցություն
- աջակցել հաճախորդին որոշում կայացնելու՝ չուղղորդված և չհարկադրված ձևով
- գնահատել առողջապահական ոլորտի այլ մասնագետին դիմելու անհրաժեշտությունը և ցուցման դեպքում կազմակերպել այն
- կառուցողական կերպով ընգրկված լինել գործընկերների մասնագիտական վերահսկողության գործընթացում

- հիմնել և պահպանել միջդիսցիպլինար մասնագիտական հարաբերությունները և գործառույթները և գործել որպես առողջապահական թիմի մի մաս:

#### 4. Մասնագիտական էթիկական հմտությունները և արժեքները

##### Ծրագրի ավարտից հետո շրջանավարտը պետք է

- կարողանա հանդես գալ գենետիկական խորհրդատուի մասնագիտության էթիկական, իրավական և փիլիսոփայական սկզբունքների և արժեքների համաձայն
- պատկերացում ունենա գենետիկական առողջությանը վերաբերվող էթիկական սկզբունքների մասին (WMA Հելսինկիի հռչակագիր)
- կարողանա ինտեգրել էթիկական սկզբունքները խորհրդատվության պրակտիկայում
- կարողանա պահպանել հաճախորդից ստացած տեղեկատվության գաղտնիությունը և անվտանգությունը
- պատրաստականություն կամ նախաձեռնություն ցուցաբերի շարունակական մասնագիտական զարգացման համար

##### Հղումներ

- Core competences for genetic counsellors, European Board of medical genetics, June 2010
- European Core Curriculum for the Master programme in Genetic Counselling
- Code of professional practice for genetic counsellors in Europe, European Board of medical genetics, June 2013
- The American Board of Genetic Counseling , Genetic Counselors' Scope of Practice, June 2007

Այս ծրագիրը ֆինանսավորվել է Եվրոպական Հանձնաժողովի աջակցությամբ՝  
Դրամաշնորհի համաձայնագիր 544331-TEMPUS-1-2013-1-AM-TEMPUS-JPCR  
Այս տպագրությունը արտահայտում է միայն հեղինակի տեսակետը, իսկ Գործակալությունը և  
Հանձնաժողովը պատասխանատու չեն նրանում պարունակվող որևէ տեղեկատվության  
կիրառման համար: